

որ մագաղաթի վրայ գրուած էր քանի մը մեթր երկարութեամբ: Թորայի մագաղաթը կը փաթթէ իր մարմնին շորս կողմը այն յոյսով որ ան զինք պիտի պաշտպանէ եւ փրկէ կրակի բոցերէն: Խարոյկը կը վառեն. մարմինը կ'այրուի. Թորայի մագաղաթն ալ կ'այրուի: Բայց մագաղաթի վրայ գրուած տառերը թռչուններու կը վերածուին եւ դէպի երկինք կը թռչին...»:

Երկինք բառը այստեղ մեր գլխուն վերեւ կապոյտ տեսնուող սա անջրպետային իրականութիւնը չէ: Երկինքը յանրժողովեան խորհրդանիշն է: Մենքուսեան այբբէնը երկինքէն է իջած, երկրի վրայ մեր հայութեան երկինքը ստեղծելու, մեր յանրժողովինը կերտելու համար: Որքա՜ն մագաղաթ ու թուղթ այրուեցաւ մեր աշխարհին մէջ: Որքա՜ն քարեղէն արձանագրութիւն փոշիացաւ մեր երկրին մէջ: Բայց անոնց մէջէն գիրը միշտ վեր թռաւ եւ երկնային անջնջելի եւ անխափանելի ուղիներով քալեց եւ քալեցուց հայ ժողովուրդը:

Այսօր այստեղ, Անթիլիասի մէջ, այդ երկինքէն պատառ մըն է ինկեր երկրի վրայ, այս պատուտուած Լիբանանեան մեր երկրին վրայ, իր անմահութեան երգը երգելու:

Վայելեցէ՛ք երգը, երկինքը երկրին խառնեցէք, գնայունը մնայունով պատուաստեցէք եւ, հաւատացէք, որ այն ատեն Ղարաբաղեան շունչով ձեր կեանքը կը դառնայ Հայ Գիրքի մշտադալար այգեստանը...:

Սկսած էր մտերմիկ «գրուց» մը Հայ Գիրքին և հայ մարդուն միջև, որ տեսեց մինչեւ ուշ երեկոյ: Հոկտեմբերի գեղեցկագոյն օրերէն մէկն էր, որ ապրեցան Կաթողիկոսարանն ու Լիբանանահայութիւնը:

ՎԱՆԱԿԱՆ

Գ. ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Կիրակի, 22 Հոկտեմբեր 1989-ին Անթիլիասի Մայրավանքին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ Վարդապետական Գաւազանի տուչութեան արարողութիւնը: Կաթողիկոսարանի Միաբանութեան անդամներէն Տ. Բաբգէն Չարեան, Տ. Խորէն Տողրամանեան եւ Տ. Ծահան Սարգիսեան աբեղաները աւարտած ըլլալով իրենց վարդապետական աւարտաճառերը, Ս. Աթոռոյս Գահակալ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի գնահատանքին արժանացան եւ նոյնինքն Վեհափառ Հօր ձեռամբ ստացան Վարդապետական Գաւազան կրելու իշխանութիւն:

Ս. Պատարագի ընթացքին, «Զի ողորմած»-ի պահուն, աբեղաները Մայր տաճարի կեդրոնը եկան եւ ծնկաչոք պատասխանեցին իրենց ուղղուած հարցումներուն իրենց հաւատքին ուղղափառութիւնը յայտնելու համար: Անոնք նզովեցին այն բոլոր հերետիկոսներն ու մոլար վարդապետներն ու աղանդաւորները, որոնք իրենց մոլորեցուցիչ քարոզութիւններով հազարաւորներ իլաժ էին Բրիստոսի հոգեւոր հօտէն: Ապա երեք Հայր Սուրբերը միասնաբար յայտարարեցին որ պիտի հետեւին ուղղափառ հայրապետներուն եւ եկեղեցական յատուկ բանաձեւով ուխտեցին անգամ մը եւս, «Հաւատամք»-ի ընդմէջէն, ուղիղ վարդապետութեամբ քարոզել եւ ան-

խախտ պահել Հայաստանեայց Առաքելական ուղղափառ Եկեղեցւոյ սրբազան վարդապետութիւնը:

Ձեռնադրութենէն անմիջապէս ետք, Վեհափառ Հայրապետը տուաւ հոգեշունչ քարոզ մը: Պօղոս Առաքելայի «Նախանձաւոր լերուք շնորհացն» բառերը բնաբան ընտրելով, Վեհափառը իր քարոզին մէջ շեշտեց շնորհքի արծարծումի կարեւորութիւնը: Մարդուն արժանիքը շնորհքը ունենալը չէ, այլ զայն աստուածաշնչական բառով՝ «արծարծել»-ն է, արժեւորելը, կեանքի եւ գործի վերածելը: Վեհափառը գնահատեց նաեւ երեք միաբաններուն աւարտաճառները եւ այն կարողականութիւնը աշխատանքի որ ունին երեք վարդապետները իբր շնորհք Աստուծմէ տրուած:

Անոնք ընտրած էին հետեւեալ նիւթերը իբր վարդապետական աւարտաճառներ.—

1.— «Հայ Հոգեւորականութեան Բաժինը Մեծ Եղեռնին Մէջ»

2.— «Բարգէն Աթոռակից Կաթողիկոս»

3.— «Եփրեմ Խորի Ասորի»

Քարոզէն յետոյ շարունակուեցաւ Ս. Պատարագը:

Պատարագէն ետք, նոր ձեռնադրուած վարդապետները Վեհաբանի մոտքին ընդունեցին հարազատներու, բարեկամներու եւ հաւատացեալ ժողովուրդին շնորհատրութիւնները, որոնք մաղթեցին յարատեւ վերելք իրենց Ս. Ուխտին եւ հոգեւորական ծառայութեան մէջ:

Հաւատացեալներու հսկայ բազմութիւնը անգամ մը եւս առիթը ունեցաւ լեցունելու Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդական խորհուրդներու եւ ծէսերու շունչով, եւ ապրեցաւ այն պահերէն մին երբ Ս. Հոգին իր շնորհքները կը զեղու արժանաւոր ծառաներու վրայ:

Ժ. Փ. 2.

